

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ. նոյեմբերի 9-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 34-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ Ս.Մարկոսյան):
2. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Մեղրյան):
3. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի, ըստ ամբիոնների, թեմաների հաստատման մասին:
4. Հաղորդում 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ Ս.Մարկոսյան):

Քաղաքացիական դատավարության ամբիոն ասիստենտ, ի.գ.թ. Ս.Մարկոսյանը ընդհանուր գծերով ներկայացրեց ՀՀ Դատական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ նաև՝ Նախագիծ) տեղ գտած սկբունքորեն նոր օրենսդրական կարգավորումները: Անդրադառնալով դատական համակարգի կազմավորման ինստիտուցիոնալ հարցերին՝ զեկուցողը նշեց, որ ստեղծվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի դատական տարածքը լինելու է Երևան քաղաքը: Ձեկուցողը նշեց, որ այս կարգավորման նպատակը Երևան քաղաքի տարբեր վարչական շրջանների գործող դատարանների անհամաչափ ծանրաբեռնվածության խնդրի լուծումն է: Բացի այդ, իբրև մասնագիտացված դատարան՝ ստեղծվում է նաև սնանկության դատարան: Իբրև կարևոր կարգավորում՝ զեկուցողն առանձնացրեց հստակ օրենսդրական այն դրույթը, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության քրեական գործերը քննում են միայն քրեական մասնագիտացման դատավորները: Ձեկուցողը նշեց, որ Նախագծով առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների համար, ի տարբերություն գործող կարգավորման, սահմանվել է դատավորների ոչ թե հստակ, այլ նվազագույն թվակազմ:

Ձեկուցողը կարևորեց օրենսդրական այն կարգավորումը, որ Բարձրագույն դատական խորհրդի առաջին նախագահին ընտրվելու է պաշտոնավարման առավելագույն՝ 5 տարի ժամկետով, ընդ որում՝ դատավոր անդամներից ընտրված նախագահը չի շարունակելու իրականացնել իր՝ որպես դատավորի լիազորությունները: Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների վրա տարածվելու են դատավորի համար սահմանված վարքագծի կանոնները, ինչպես նաև անձեռնմխելիության երաշխիքները՝ հաշվի առնելով այն, որ Բարձրագույն դատական խորհուրդը կոնկրետ լիազորությունների իրականացման հետ կապված՝ հանդես է գալու որպես դատարան:

Զեկուցողը նշեց, որ պաշտոնավարման ժամկետը լրացնալուց հետո Սահմանադրական դատարանի (ինչպես նաև ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանների) այն դատավորների համար, ովքեր ընտրվել են դատական համակարգից, նախատեսվել է դատավորների ցուցակում ընդգրկվելու հեշտացված ընթացակարգ:

Իբրև Նախագծի էական կարգավորում՝ զեկուցողն առանձնացրեց Նախագծի այն դրույթը, որ իբրև դատական դեպարտամենտի հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես է գալու Բարձրագույն դատական խորհուրդը, և որ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը հանդես է գալու որպես Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ա.Ղազինյանը, դոց. Կ.Գևորգյանը, դոց. Վ.Այվազյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Մեղրյան):

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, դոց. Ս.Մեղրյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական դատավարության ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի, ըստ ամբիոնների, թեմաների հաստատման մասին:

Ամբիոնների վարիչները ներկայացրին մագիստրոսական թեզերի՝ համապատասխան ամբիոնի նիստում հաստատված թեմաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել մագիստրոսական թեզերի թեմաները:

4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ ձևով ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. Ընթացիկ հարցեր:

5.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Առնոլդ Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ս.Դիրբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի առկա ասպիրանտ Առնոլդ Վարդանյանի՝ «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում»

վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոց. Հ.Ղուկասյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Մադոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը փոխելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Եվա Մադոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը և հաստատել այն՝ «Զբոսաշրջության մատուցման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Սոսե Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ս.Դիրանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի առկա ասպիրանտ Սոսե Բարսեղյանի՝ «Սահմանադրական նորմերի անմիջական կիրառման հիմքերը՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի նախկին ասպիրանտ Վարսեր Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի նախկին ասպիրանտ Վարսեր Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառությունը և հաստատել այն՝ «Իսրայելի իրավական համակարգի կրոնական և սահմանադրական հիմքերը» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, իրավական ուսմունքների պատմություն»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը. հետագա բարելավման խնդիրը» գիտագործնական մեկնաբանությունները տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը. հետագա բարելավման խնդիրը» գիտագործնական մեկնաբանությունները երաշխավորել տպագրության:

5.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Տաթևիկ Դավթյանի՝ «Ընտանեկան իրավունք, գործնական պարապմունքների ձեռնարկ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Տաթևիկ Դավթյանի՝ «Ընտանեկան իրավունք, գործնական պարապմունքների ձեռնարկ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

5.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Նարինե Դավթյանի՝ «Իրավունքի կենսագործում» մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Նարինե Դավթյանի՝ «Իրավունքի կենսագործում» մենագրությունը երաշխավորել տպագրության:

5.8 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Տաթևիկ Սուջյանի՝ «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Տաթևիկ Սուջյանի՝ «Վճռաբեկությունը՝ որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում» մենագրությունը երաշխավորել տպագրության:

5.9 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Սերգեյ Մեդրյանի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում/ընդհանուր մաս» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Սերգեյ Մեդրյանի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում/ընդհանուր մաս» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

5.9 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական բարեփոխումների ներքո» գիտաժողովի նյութերի ժողովածուն տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական բարեփոխումների ներքո» գիտաժողովի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆԻ 2016-2017թթ.ու. տարվա ուսումնականնգիտահետազոտական գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են հիմք ընդունելով ֆակուլտետի 2014-2019 թթ. հեռանկարային զարգացման ծրագրով նախանշված ռազմավարական նպատակները և խնդիրները:

1. Իրավաբանական կրթությանն ապրակտիկայի հետեզոտում

Ի կատարումն են ընդունելով հաշվետու ժամանակաշրջանում՝

1. ամբողջությամբ վերանայվել են ամբիոնային դասընթացների առարկայական ծրագրերը և ավարտական պետական քննության հարցաշարը՝ դրանց որոշակի մասը հատկացնելով պրակտիկ գործերի ուսումնասիրությանը՝ ներառյալ Եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, Արդարադատության խորհրդի, ԴՆԽ-ի, ինչպես նաև առանձին դատական գործերի ուսումնասիրությանը: Ընդ որում՝ նշված նյութերից անկր, ըստ էության, ներառվել է առարկայական ծրագրերում, ուսանողներին առանձին դասընթացների շրջանակներում պարզաբանվել է համապատասխան որոնողական համակարգերի միջոցով նշված նյութերը դրանք ձեռք բերելու եղանակները, իսկ այն նյութերը, որոնք հնարավոր չէ ձեռք բերել առցանց, պարբերաբար ուղարկվել են ուսանողներին էլեկտրոնային եղանակով: Պետական քննության հարցաշարում, իր հերթին, յուրաքանչյուր հարցի կողքին նշվել են այն նախադեպային և այլակետերը, որոնց ուսանողը պետք է անդրադառնա տվյալ հարցը պատշաճորեն ներկայացնելու համար:

2. համապատասխանաբար որոշակի փոփոխություններ են կատարվել դասախոսությունների, սեմինարն գործնական պարապմունքների անցկացման մեթոդներում, որոնք առավելապես թիրախավորված կերպով նպատակ են հետապնդում ուսանողների մոտ զարգացնել վերլուծական և կիրառական կարողությունները: Ներկայումս պարապմունքների զգալի մասը նվիրված են շված պրակտիկ նյութերի, իրավական դիրքորոշումների ուսումնասիրությանն ու քննարկմանը, ինչպես նաև նմանատիպ իրավիճակների նվիրված խնդիրներ իրականացնելու մասին:

3. գրավոր ընթացիկ ստուգումների և քննությունների քննական տոմսերում ներառվող խնդիրները կազմվել են այն հաշվով, որ բարձր գնահատականի կարող են հավակնել բացառապես այն ուսանողները, որոնք ոչ միայն ծանոթ են, այլ նաև ի վիճակի են ներկայացնել, վերլուծել և կիրառել առարկայական ծրագրերում ներառված նախադեպային և այլ պրակտիկ նյութը:

Ներկայումս ամբիոնն իր առջև խնդիր է դրել՝

- վերանայելու սանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման և անց-
կացման կարգը՝ դրա արդյունավետությունն է ապահովելով էլոնկատառումն է-
րով՝ այդ հարցում ակնկալելով համալսարանի և ֆակուլտետի օժանդակությունը,

- կազմակերպել պրակտիկա շխատողների կողմից առանձին թեմաներով դասախո-
սություններ ներանցման և կցությամբ բնարկումներ, ինչը թույլ կտա խիստ գործնա-
կան տեսանկյունից դիտարկել պրակտիկ խնդիրները և իրավակիրառական ոլորտները-
թացք, կնպաստի դասընթացների և կատամբ հետաքրքրության բարձրացմանը և սա-
նողների մասնագիտական կողմնորոշմանը:

2. Կրթական ծրագրերի արդիականացում

Ի կատարումն ընդունված նպատակի, հաշվետու ժամանակաշրջանում՝ աշխատաշու-
կայի պահանջները հուսումնասիրության, ինչպես նաև բարձրագույն կրթության ազգա-
յին շրջանակներում ախանջված կրթական վերջնարդյունքների հիման վրա, քաղաքացիա-
կան իրավունքի ամրապնդման հետևանքով, ամբողջությամբ վերանայվել են «Քաղաքացիա-
կան իրավունքի ամրապնդման հետևանքով, ամբողջությամբ վերանայվել են «Քաղաքացիա-
կան ծրագրերը՝ ներառյալ դրանցում նախնական պլանները, կրթական վերջնարդյունքնե-
րը, դասընթացների առարկայական ծրագրերը և գիտելիքների ստուգման ձևերը: Ընդո-
րում, վերը նշված նկատառումներից ելնելով, ներդրվել են նոր դասընթացներ, ուսումնա-
կան պլանից հանվել են այն դասընթացները, որոնք այս կամ այն չափով ուսումնասիր-
վում են բակալավրիատում, կատարվել է առկա դասընթացների կատարելագործում:

3. Ուսումնական առարկայական ծրագրերի ձևի կրթականության արդիականացում

Ժամանակի զարգացումներին համահունչ հաշվետու ժամանակաշրջանում վերա-
նայվել են բակալավրիատում դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրե-
րը: «Քաղաքացիական իրավունքի ամրապնդման հետևանքով, ամբողջությամբ վերանայվել են
մագիստրոսական ծրագրերի վերանայման կապակցությամբ ամբողջությամբ արմա-
ցվել են նաև մագիստրոսական դասընթացների առարկայական ծրագրերը: Ընդորում, ինչ-
պես նշվել է վերը, հիմնական շեշտը դրվել է օրենսդրական զարգացումներին համա-
հուն չնորթեմաների ներդրում, նորադրյուններն ախատեսելու, ոչ արդիական և կիրառա-
կան նվազ կարևոր նշանակություն ունեցող թեմաների հաշվին առարկայական ծրագրե-
րը բեռնաթափելու վրա:

4. Դասավանդման մեթոդիկայի կատարելագործում

Անշուշտ, վերընշված խնդիրների լուծման ընթացքում առավել քանակն հայտեղար-
ձել լիցենզիայի ստանդարտները հիմնականում հիմնախնդիրը: Ոչ միայն ամբիո-
նի, այլ նաև ֆակուլտետի անելիքներն այստեղ բավականին շատ են:

Իհարկե, այսուղղությամբ ամբիոնը կատարել է որոշակի աշխատանքներ, ո-
րոնց մասին մասամբ նշվել է վերը, սակայն կարծում ենք, որ խնդիրը պետք է լուծ-
վի խիստ թիրախավորված ձևով:

Հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ ֆակուլտետում դասավանդման մեթոդնե-
րի կիրառման առկա մի ճակի ուսումնասիրությունը դասավանդման մեթոդների վերա-
բերյալ ֆակուլտետի զարգացման ծրագրով նախատեսված ուղեցույցի մշակումը, ինչ-
պես նաև դրա հիման վրա ամբիոնի դասախոսների վերապատրաստման իրականացու-
մը ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել:

Քննարկվող խնդիր լուծման նկատմամբ կարող են պատել 2018 թ. փետրվարին GIZ-
ի աջակցությամբ գերմանացի պրոֆեսոր Ռոլֆ Քլիփերի մասնակցությամբ նախանշ-
ված վերապատրաստման դասընթացը, որի շրջանակներում նախատեսվում է քաղաքա-
ցիական իրավունքի օրինակով ներկայացնել իրավական խնդիրների մշակման, լուծ-
մանն զգաճ հատման մեթոդաբանությունը:

Ամբիոնը պլանավորել է ամբողջ կազմով մասնակցել նշված միջոցառմանը, ո-
րը ոչ միայն կնպաստի գործնական պարապմունքների անցկացման մեթոդիկայի կատա-
րելագործմանը, այլ նաև անհրաժեշտ հիմք կարող է հանդիսանալ համապատաս-
խան խնդրագրքերի խնդիրների լուծման մեթոդական ուղեցույցների մշակման համար:

5. Գիտելիքների ստուգման և գնահատման մեխանիզմների կատարելագործում

Այս ուղղությամբ ևս բավականի աշխատանքներ են կատարվել: Նպատակ հե-
տապնդելով ոչ միայն պարզել առանձին դասընթացների շրջանակներում ուսանող-
ների ձեռք բերած գիտելիքները, այլ նաև վեր հանել ուսանողների վերլուծական և կի-
րառական կարողությունները, ՄԻԵԴ-ի, ՄԴ-ի, ՎԴ-ի իրավական դիրքորոշումների ի-
մացությունը և կիրառման կարողությունները՝

1) Հաշվետու տարում աշխատանքներ են կատարվել բակալավրիատի ուսանող-
ների գրավոր աշխատանքների ստուգման և կատարելագործման ուղղությամբ, մաս-
նավորապես՝ թարմացվել են քննական խնդիրները, վերանայվել է դրանց բովանդա-
կությունը: Ընթացիկ ուս. տարվա առաջին ընթացիկ ստուգումների ընթացքում, պայ-
մանավորված ընթացիկ ստուգումների արդյունքների գնահատման նոր մեխանիզմ-
ների ներդրմամբ, ամբողջությամբ վերանայվել են քննական առաջադրանքների գնա-
հատման չափանիշները: Ընդ որում, որպես հիմք ընդունվել է նախորդ ուս. տարվա
ավարտին մշակված պետական ավարտական քննությունների համար մշակված ու-
ղեցույցը՝ համապատասխանաբար քննական առաջադրանքի (խնդրի) լուծման կա-
պակցությամբ ուսանողի շարադրանքը գնահատելով ըստ դրսևորած իրավական գի-

տելիքի, վերլուծական կարողության, կատարված եզրակացության ճշտության, լրիվության և շարադրանքի հստակության, ճշտության, տրամաբանական կառուցվածքի:

Բացի այդ, այս տարի ընթացիկ ստուգումների ընթացքում պիլոտային կարգով գրավոր քննությունն ավարտելուց հետո ուսանողներին էլեկտրոնային կարգով ուղարկվել են քննական խնդիրների օրինակելի լուծումները, ինչը հնարավորություն է տվել նրանց քննությունն ավարտելուց անմիջապես հետո պատկերացում կազմել իրենց բացթողումների, սխալների և հնարավոր գնահատականների վերաբերյալ: Դրանով իսկ որոշակիորեն ապահովվել է քննական պրոցեսի կանխատեսելիությունը, ստուգող դասախոսների կողմից աշխատանքները ստուգելիս միասնական մոտեցման դրսևորումը, կանխվել են համատարած բողոքարկումները: Կարծում ենք, որ նման պրակտիկան բավականին արդյունավետ է, ուստի արդյունքներն ամբիոնում քննարկելուց հետո ամենայն հավանականությամբ հաջորդ քննաշրջանում դրա կիրառումն կընդլայնենք:

2) 2016-2017 ուս. տարում բակալավրիատի պետական քննությունը «Քաղաքացիական դատավարություն» առարկայից առաջին անգամ կազմակերպվել է գրավոր ձևով: Ընդ որում, ձեռք բերված փորձի և հանձնաժողովի կազմում ընդգրկված պրակտիկ աշխատողների դիտողությունների հաշվառմամբ ներկայումս մշակվում են 2017-2018 ուս. տարվա պետական քննության ընթացքում առաջադրվելիք խնդիրների տարբերակները, հստակեցվում են գնահատման չափանիշները:

6. Ուսումնական և ուսումնասօժանդակ նյութերի արդիականացում

Խնդիրն ամբիոնի ցավոտ խնդիրներից է: Այսօրվա դրությամբ ուսումնական և ուսումնասօժանդակ նյութերով բավարար չափով ապահովված են մագիստրոսական դասընթացները:

Ինչ վերաբերում է բակալավրիատում դասավանդվող առարկաներին, ապա տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով հայալեզու և պատշաճ որակի դասագրքով ապահովված է միայն ՀՀ աշխատանքային իրավունք դասընթացը:

Բավականին սուր է Քաղաքացիական դատավարություն, Էկոլոգիական իրավունք դասընթացները ուսումնական նյութերով ապահովելու խնդիրը, որն ամբիոնը պլանավորում է լուծել մեկ-երկու տարվա ընթացքում: Դրան զուգահեռ պլանավորվում է Քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից GIZ-ի օժանդակությամբ մշակված խնդրագրքի օրինակով մշակել նաև քաղաքացիական դատավարության խնդրագիրք, որը ոչ միայն կպարունակի խնդիրներ՝ ըստ առանձին թեմաների, այլ առավելապես նպատակաուղղված կլինի ուսանողներին մատուցելու իրավական խնդիրների լուծման մեթոդաբանությունը, զարգացնելու դատավարական փաստաթղթեր կազմելու կարողությունները:

7. Կրթական գործընթացների իրականացման համար ստեղծված նյութատեխնիկական պայմանների արդյունավետ օգտագործումը և առկա խնդիրները

1) Ուսանող-դասախոս շփումներն ամրապնդելու, կրթական գործընթացի կազմակերպման և բովանդակային արդյունավետության բաձրացման նպատակով ամբիոնի դասախոսներն ակտիվորեն օգտագործում են ուսանողներին ԵՊՀ-ի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեները՝ դասախոսություններից և սեմինար ու գործնական պարապմունքներից առաջ և հետո դրանց ուղարկելով քննարկման, ուսումնասիրման ենթակա ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ նյութերը, ինչպես նաև գրավոր հանձնարարությունները:

2) Քաղաքացիական դատավարությունառարկայի շրջանակներում բոլոր դասերին օգտագործվում են լսարաններում տեղադրված պրոեկտորները սխեմատիկ նյութեր, դատավարական փաստաթղթեր ցուցադրելու նպատակով: Կարծում ենք, որ պարապմունքների արդյունավետությունն էլավելի կարող է բարձրանալ, եթե լսարաններում առկա լինեն էլեկտրոնային գրատախտակներ, որակյալ ինտերնետ կապ, տեսանյութեր դիտելու հնարավորություն:

3) Պետք է ընդունել, որ ամբիոնը պատշաճորեն չի օգտագործում դատական նիստերի դահլիճը: Այստարի պլանավորում ենք բրորոդկուրսի ուսանողների մասնակցությամբ երկրորդ կիսամյակում կազմակերպել ուսումնական դատախաղեր, ինչպես նաև գործող դատավորների օժանդակությամբ մեկ-երկու իրական դատական նիստեր: Նման միջոցառումները, անկասկած, կարող են նպաստել ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացմանը և քաղաքացիաիրավական դասընթացների նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը:

8. Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում և պրոֆեսիոնալիզմի կատարելագործում

1) Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում **գիտական կազմակերպչական կադրերի պատրաստումը**: Ամբիոնն ունի 1 առկա, 6 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, 3 հայցորդ:

Ամբիոնում պարբերաբար քննարկվում են ասպիրանտների ու հայցորդների հաշվետվությունները, նրանց գիտական հոդվածները: Ամբիոնը նրանց աջակցություն է ցուցաբերել հոդվածների տպագրման, թեզերի պատրաստման աշխատանքների կազմակերպման և նախնական պաշտպանության հարցում:

2016թ. դեկտեմբերի 9-10-ը տեղի է ունեցել, արդեն ավանդույթ դարձած, ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որին մասնակցել են ամբիոնի ասպիրանտների և հայցորդներ: Ամբիոնի 7 ասպիրանտի զեկույցները գիտա-

կան հողվածի տեսքով հրապարակվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուում:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի սպիրանտներ Հ. Հախվերդյան և Տ. Խաչիկյանը պաշտպանել են թեկնածուականատենախոսություններ և ներկայումս կտիվորեն ներգրավվել են ամբիոնի աշխատանքներում:

2) Ամբիոնը հնարավոր բոլոր միջոցներով խրախուսում է **ամբիոնի անդամներ մասնակցությունը մասնագիտական վերապատրաստման ծրագրերին**, արտասահմանում հետբուհական կրթություն ստանալուն: Այսպես, ամբիոնի անդամներ Տ. Վարդագարյանը 2016 ուս. տարում ավարտել է Լուսումնը Անգլիայի Նոթինհեմի իրավաբանական դպրոցում՝ մագիստրոսի աստիճան, Պ. Թադևոսյանը և Լ. Պետրոսյանը 2017-2018 ուս. տարվա երկրորդ կիսամյակում մեկնելու են վերապատրաստման Ֆլետչերի համալսարան:

Տ. Վարդագարյանի օրինակը ցույց է տալիս արտասահմանյան վերապատրաստումների դրական արդյունքները՝ դասավանդման նուսանողների հետ շփումների նորմակարգակում եթողաբանություն, օտարլեզուների հիմնարկական կատարելագործում, գիտավերլուծական ունակությունների կտրուկ աճն այլն:

3) **Պրոֆեսորադասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմի կատարելագործման նուղված միջոցառումներից** արկենք համարում նշել նաև հետևյալը.

- ամբիոնի բոլոր դասախոսներն ու սպիրանտները մասնակցել են 2016 թ. սեպտեմբերի 19-20-ին Երևանի Մարիոթիյուրանոցում GIZ-ի կազմակերպած սեմինարին՝ նվիրված իրավաբանական կրթության նդասավանդման մեթոդներին,

- ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը ֆակուլտետի պատվիրակության կազմում մասնակցել է 2016 թ. սեպտեմբերի 21-23-ը Թբիլիսիում GIZ-ի կազմակերպած տարածաշրջանային կլոր-սեդանին՝ նվիրված իրավաբանական կրթության նդասավանդման մեթոդներին,

- ամբիոնը հատուկ ուշադրություն է դարձնում ԵՊՀ դասախոսների վերապատրաստման ծրագրերին: Ամբիոնի հիմնական դասախոսներ Ս. Մեղրյանը, Վ. Հովհաննիսյանը, Գ. Պետրոսյանը, ավարտել են 2011-2016 թթ. ԵՊՀ դասախոսների վերապատրաստման ծրագիրը: ԵՊՀ վերապատրաստման նործրագրի դասընթացներին կտիվորեն մասնակցում են ամբիոնի դասախոսներ Վ. Եսայանը, Պ. Թադևոսյանը և Օ. Գեղամյանը:

9. Ֆակուլտետի միջազգայնացման, անգլերեն կազմակերպմանը և դասախոսների նուսանողների շարժունակությունն ապահովելու նուղված միջոցառումներ

Նշված նուղությունների հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են նախանշվել են որոշ աշխատանքներ: Մասնավորապես՝

1) ամբիոնիանդամՏ. Վարդագարյանիկողմիցմշակվել է «Աշխատանքայինիրավունք» անգլալեզուդասընթացը, որըներկայցվել էԵՊՀ-ինօտարերկրյաբուհերիուսանողներինտարբերփոխանակմանծրագրերիշրջանակներումառաջարկելուհամար.

2) ամբիոնիանդամներՏ. Վարդագարյանը, Պ.ԹադևոսյանըևԼ.ՊետրոսյանըՈԻԳԸ-իջանքերովկազմավորվածխմբերումառանձինթեմաներովհանդեսենեկելանգլերենդասախոսություններով.

3) Էկոլոգիականիրավունքիկենտրոնիաշխատանքներումներգրավվածբոլորդասախոսներըևսպիրանտները 11.04.2016 թ. մասնակցել են «Շրջակամիջավայրիհարցերովկորպորատիվպատասխանատվություննանդրսահմանայինհամատեքստում» և «Շրջակամիջավայրինվերաբերողհարցերովարդարադատությանմատչելիությունըմիջազգայինիրավունքում» թեմաներովԿենտրոնումկազմակերպվածդասախոսություններին, որոնքվարել էՍտոկհոլմիհամալսարանիիրավաբանականֆակուլտետիդեկան, ՕրիուսկոնվենցիայիՀամապատասխանությանկոմիտեի նախագահպրոֆեսորՅոնասԷբեսսոնը.

4) ամբիոնիանդամներԱ.ԻսկոյանիևՀ.Հախվերդյանիհամահեղինակությամբնախապատրաստվելևտպագրությանէհանձնվել Environmental Law of the Republic of Armenia աշխատությունը, որըպետքէհրատարակվիհունգարական WestLaw ակադեմիականպարբերկանում.

5) ներկայումսամբիոնիվեցանդամներ (Ս. Մեղրյան, Ա.Իսկոյան, Հ.Հախվերդյան, Տ.Վարդագարյան, Տ. Մարկոսյան, Լ.Պետրոսյան) նախապատրաստումենգիտականհոդվածներֆակուլտետիանգլալեզուժողովածուիշրջանակներումհրատարակելունպատակով.

10. Կրթականգործընթացներիհրապարակայնությանևթափանցիկությանապահովում

Այդնպատակինհասնելուհամարշատքայլերչենկատարվել: Այդուհանդերձ, ամբողջությամբթարմացվել էամբիոնի, ամբիոնիդասախոսներինընթացիցհրապարակումներիվերաբերյալֆակուլտետիկայքումգետեղվածտեղեկատվությունը, կայքումտեղադրվել ենդասընթացներիհառարկայականծրագրերը, քննականհարցաշարերը:

11. Ուսանողականկառույցներիաշխատանքիակտիվացմաննուղղվածմիջոցառումներ

ԱմբիոննակտիվօժանդակությունեցուցաբերելՈԻԳԸ-իկողմիցկազմակերպվողուսանողականգիտականմիջոցառումներին: Մասնավորապես՝

1) հաշվետուժամանակաշրջանումՈԻԳԸ-իաշնանայիննգարնանայիննստաշրջանիընթացքումնախապատրաստվելներկայացվել էթվով 9 ՈԻԳԸաշխատանքներ, որոնքաչքիենընկելիրենցարդիականությանբերքարձրորակով: Դրանցմեծամասնությունըհրատարակվել է.

2) 2017 թ. հոկտեմբերինևս 4 ՈԻԳԸաշխատանքներկայացվել էԵՊՀՈԻԳԸհիմնադրման 70-ամյակինվերված 4-րդմիջազգայինգիտականնստաշրջանիընթացքում:

Ամբիոնը խրախուսել է ընթացիկ տարվա ընթացքում սխրախուսելու և սանոդական կառույցների կողմից մասնագիտական խմբակների, բանավեճային կուրսերի, անգլալեզու դասախոսությունների կազմակերպմանն ուղղված աշխատանքները:

12. Ամբիոնի գիտական գործունեությունը

1. Հաշվետու տարում հրատարկվել են ամբիոնի անդամների հետևյալ **գիտական աշխատությունները՝**

- մենագրություններ՝ 1 (Վ. Գրիգորյան, Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում),
- գիտական հոդվածներ՝ 25,
- ուսումնասովանողական ձեռնարկ՝ 1:

2. Պաշտպանվել է երկու **թեկնածուական ատենախոսություն՝**

- Հ. Հախվերդյան, «ՀՀ-ում էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական ասպեկտները».
- Տ. Խաչիկյան, «Մաքսային հսկողության իրավական հիմքերը ՀՀ-ում»:

3. ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովում (2016 թ.) ներկայացվել է թվով երեք (Տ. Մարկոսյան, Վ. Գրիգորյան, Պ. Թադևոսյան), իսկ համապատասխան ժողովածուի մեջ ներառվել է ևս վեց **գիտական զեկույցներ**:

4. Էկոլոգիական իրավունքի կենտրոնի ուժերով 2017 թ. հունիսին կազմակերպվել է «Էկոլոգիական տեղեկատվության իրավական ասպեկտները. օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները և հեռանկարները ՀՀ-ում» թեմայով **գիտաժողով**, որին մասնակցել են պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, ԵՊՀ և այլ ԲՈՒՀ-երի դասախոսներ, ուսանողներ:

5. Էկոլոգիական իրավունքի կենտրոնը՝ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի, Ազգային ջրային համագործակցություն ՀԿ-ի գործընկերությամբ և ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ իրականացնում է «Ջրային ռեսուրսների մասնակցային եւ արդյունավետ օգտագործում» **դրամաշնորհային ծրագիրը**, որի աշխատանքները նախատեսված է ավարտել 2018 թ. ապրիլին:

13. Արտահամալսարանական գործունեություն

1) Ամբիոնի անդամները դասախոսություններով մասնակցել են ՀՀ արդարադատության ակադեմիայում ընթացող վերապատրաստման դասընթացներին (Ս. Մեղր-

յան, Վ. Հովհաննիսյան, Տ. Մարկոսյան), ինչպես նաև դասախոսություններով հանդես են եկել ՀՀ Փաստաբանական դպրոցում (Ս. Մեղրյան, Տ. Մարկոսյան):

2) Ամբիոնի անդամներ Ս. Մեղրյանը, Վ. Հովհաննիսյանը, Տ. Մարկոսյանը՝ որպես Եվրոպայի Խորհրդի փորձագիտական խմբի անդամներ կամ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ ներգրավված են ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծի լրամշակման աշխատանքներին (նախագիծը 2016 թ. ներառվել է ՀՀԱԺ օրակարգ, 2017 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին լրամշակվել է և հոկտեմբերին կրկին դրվել է շրջանառության մեջ):

3) Ամբիոնի անդամներ Ս. Մեղրյանը, Տ. Մարկոսյանը և Լ. Պետրոսյանը՝ որպես Եվրոպայի Խորհրդի փորձագիտական խմբի անդամներ կամ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ ներգրավված են ՀՀ դատական օրենսգրքի նախագծի պատրաստման աշխատանքներին (նախագիծը ներկայումս դրվել է շրջանառության մեջ):

4) Ամբիոնի անդամներ Ա. Իսկոյանը, Հ. Հախվերդյանը, Օ. Գեղամյանը և Լ. Պետրոսյանը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցների համար կազմակերպել և կարդացել են դասախոսություններ «Շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում» թեմայով:

Ամբիոնի վարիչ

Ս. ՄԵՂՐՅԱՆ